

Կորոնավիրուս

Պաշտպանիր քեզ

- Պարբերաբար լվացե՛ք ձեր ձեռքերը:
- Մի՛շտ օգտագործե՛ք անձեռոցիկներ: Օգտագործելուց հետո անմիջապես նետե՛ք փակ աղբամանի մեջ:
- Եթե՝ անձեռոցիկ չունե՛ք տվյալ պահին, փոշտալիս կամ հագալիս անպայման փակե՛ք բերանը արմուկի ծայքով:
- Եթե հիվանդ եք, մնացե՛ք տանը և տեղեկացրե՛ք այդ մասին բուժ. ծառայությանը:
- Փորձե՛ք ձեռքերով չդիպչել դեմքին:
- Մի՛ դիպչե՛ք միմյանց:
- Խուսափե՛ք հիվանդ մարդկանց հետ շփումից:

Կորոնավիրուսները վիրուսների մեծ ընտանիք է, որոնք առաջացնում են սովորական մրսածությունից մինչև ավելի լուրջ հիվանդություններ, ինչպիսիք են՝ Մերձավոր Արևելքի շնչառական համախտանիշը (Mers-CoV) և Ծանր ընթացքով սուր շնչառական համախտանիշը(Sars-CoV):

Կորոնավիրուսային հիվանդությունը (COVID-19) նոր ենթատեսակ է, որը հայտնաբերվել է 2019թ.-ին և նախկինում չի եղել մարդկանց մոտ:

Կորոնավիրուսները ունեն կենդանական ծագում, որը նշանակում է, որ դրանք փոխանցվել են կենդանիներից մարդկանց:

Կորոնավիրուսների մի քանի հայտնի տեսակներ հանդիպում են կենդանիների մոտ, որոնցով մարդիկ դեռևս չեն վարակվել:

Վարակման ընդհանուր նշանները ներառում են շնչառական ախտանիշներ, տենդ, հազ, շնչահեղձություն և շնչառության դժվարություններ: Ավելի ծանր դեպքերում վարակը կարող է առաջացնել թոքաբորբ, սուր շնչառական համախտանիշ, երիկամների անբավարարություն և նույնիսկ մահ:

Վարակի տարածումը կանխելու համար համընդհանուր ցուցումները ներառում են ձեռքերը պարբերաբար լվանալը, հագալիս և փոշտալիս բերանը և քիթը ծածկելը, միսը և ձուն լավ եփելը:

Խուսափե՛ք հազ, փոշտոց, շնչառական խնդիրներ ունեցող մարդկանց հետ սերտ շփումներից: